

---

---

**ՀԱՅԵՐԵՆԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ  
ԸՍՏ ՆՈՍՏՐԱՏԻԿ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ**

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Գ. Վ.

Մի քանի լեզվաընտանիքների ցեղակցության գաղափարը նորություն չէ: Այդ մասին ժամանակին գրել է Պեդերսենը, որն առաջի-նր մի քանի լեզվաընտանիքներ միավորող նախալեզուն անվանեց «նոստրատիկ»: Մարդկային լեզվի միասնական ծագման տեսակետի կողմնակից էր իտալացի մեծ լեզվաբան Ա. Տրովբետին, որն առաջինը փորձ կատարեց համեմատելու աշխարհի լեզուները՝ դառնալով իրեն ժամանակակից լեզվաբանների քննադատության թիրախ: Հետագայում Վ. Իլիչ-Սվիտիչի ուսումնասիրություններն այլևս կասկած չթողեցին, որ վեց լեզվաընտանիքների բառային և քերականական ընդհանրությունները պատահական բնույթ չեն կրում: Ներկայումս նոստրատիկ լեզուների ցանկն ընդգրկում է աշխարհի գրեթե բոլոր, նույնիսկ խիստ առանձնացած դիրք գրավող հնաֆրիկյան կամ բուշմեն-հոտենտոտյան լեզուները, որոնք, ըստ Ա. Մելնիչուկի, առավել հնատիպ են<sup>1</sup>:

Ինչպես հայտնի է, հայերենի արմատների գերակշիռ մասը ստուգաբանվել է այն ժամանակ, երբ նոստրատիկ լեզվաբանության տվյալները լրջորեն չէին ընկալվում: Մեծ լեզվաբան Հ. Աճառյանը, տարբեր լեզվաընտանիքների հարյուրավոր լեզուներ ուսումնասիրելով, դրանք համեմատել է հայերենի հետ, սակայն, ժամանակի մտայնությանը տուրք տալով, իր իսկ հայտնաբերած բոլոր նմանությունները համարել է պատահական: Հայերենի արմատների ստուգաբանության հարցում ապակողմնորոշիչ դեր ունեցան և՛ հայերի եկվորությունն «ապացուցող» տեսությունները, և՛ այն հանգամանքը, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը փնտրվում էր ամենուր, բացի հայկական լեռնաշխարհից: Հետագայում ոչ միայն սասանվեց հայերի եկվորության վարկածը, այլև գոյության իրավունք ստացավ մի տեսություն, համաձայն որի՝ Հայկական լեռնաշխարհը հնդեվրոպական ժողովուրդների նախահայրենիքն է:

Համոզված ենք, որ լեզուն չի կարող, իր բնօրրանում գտնվելով, ավելի շատ փոփոխության ենթարկվել, քան այդտեղից հազարավոր կիլոմետրեր հեռու հայտնվելու դեպքում: Օրինակ՝ ռոմանական լեզուների հայրենիքը Ապենինյան թերակղզին է: Այժմ հռոմեացիները չկան, լատիներենը մեռած լեզու է, իսկ նրա ժառանգորդները տարածված են եվրոպական մայրցամաքում: Մակայն լատիներենին ամենամոտ կանգնածը մնում է իտալերենը, քանի որ մյուս ռոմանական լեզուները, լեզվի կրողների միջոցով նախահայրենիքից հեռանալով՝ ենթարկվել են այլևայլ փոփոխությունների: Նույն կերպ օսերենը, լինելով իրանական լեզու և հայտնվելով Հյուսիսային Կով-

---

<sup>1</sup> Мельничук А. С., *О всеобщем родстве языков мира (Вопросы языкознания (այլուհետև)՝ ВЯ), 1991, N 2.*

կատում, ենթարկվել է կովկասյան ենթաշերտի խիստ ազդեցության: Այն նկատելիորեն տարբերվում է մյուս իրանական լեզուներից: Արդ, կարող էր, արդյոք, հայերենը, բնօրրանից չհեռանալով, փոփոխվել ավելի, քան նախալեզվի այն բարբառները, որոնք գաղթի ակիբների հետ տարածվել են մինչև Բրիտանական կղզիներ և Հնդկաստան: Կարծում ենք, որ ոչ: Մինչդեռ, փորձելով վերականգնել հնդեվրոպական նախալեզուն, հնդեվրոպաբանները պարզապես «միջին թվաբանական» են հանել կենդանի և մեռած լեզուներից՝ առավել մեծ նշանակություն տալով սանսկրիտի, դասական լատիներենի և հունարենի տվյալներին: Այն մասին, որ վերոնշյալ երեք լեզուների դերն անհարկի ուռճացվել է հնդեվրոպաբանության մեջ, ժամանակին գրել են նաև Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը<sup>2</sup>: Դրա հետեվանքով հնդեվրոպական նախալեզվին վերագրվել է երկար ու կարճ ձայնավորների, երկբարբառների և վանկարար ձայնորդների մի այնպիսի բազմություն, որ տիպաբանության տեսակետից որևէ քրննադատության չի կարող դիմանալ, քանի որ աշխարհի ոչ մի լեզվում նման բան չկա: Եվ այն, որ նախահայերենիքում մնացած լեզուն որոշակիորեն առանձնացած դիրք է գրավում հնդեվրոպական լեզուների շարքում, պատահական չպետք է համարել: Կարծում ենք, որ հայերենի այն արմատներն ու քերականական ձևերը, որոնք դժվարությամբ են «տեղավորվում» հնդեվրոպական նախալեզվի մեջ, կարող են զուգահեռներ ունենալ այլ լեզվաընտանիքներում և լրջորեն նպաստել տարբեր լեզվաընտանիքների կապերի բացահայտմանը:

Իտալացի ակնավոր լեզվաբան Ալֆրեդո Տրոմբետին թերևս առաջինն էր, որ փորձեց աշխարհի լեզուները համեմատել՝ անկախ լեզվաընտանիքներից և ստուգաբանել ըստ ծագումնաբանական փնջերի, որոնք նա պարզապես անվանեց *variazione della radice* (արմատի փոփոխակ)<sup>3</sup>: Ծագումնաբանական փնջերի գաղափարին անդրադարձել է նաև Գ. Ջահուկյանը<sup>4</sup>: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ա. Մելնիչուկի տեսակետը, համաձայն որի՝ արմատի ծագումնաբանորեն նույնական հնչյունական փոփոխակները պետք է դիտվեն իբրև միևնույն արմատի տարբերակներ՝ հակառակ այն բանի, որ ավանդական ուղղության համեմատաբանները դրանք շարունակում են դիտարկել իբրև առանձին արմատներ: Հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ Ա. Մելնիչուկը հնչյունական փոփոխակները խմբավորում է ըստ արտասանության տեղի՝ հետնալեզվային և կոկորդային /k/g/gh/k/ǵ/ǧh/k<sup>u</sup>/g<sup>u</sup>/g<sup>hu</sup>/H/, առաջնալեզվային /t/d/dh/s/,

<sup>2</sup> Гамкредидзе Т. В., Иванов В. В., *Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры*, т. 1, Тбилиси, 1984, с. 9.

<sup>3</sup> Trombetti A., *L'unità d'origine del linguaggio*, Bologna, 1962, p. 23.

<sup>4</sup> Ջահուկյան Գ. Բ., *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987:*

շրթնային /p/b/bh/m/<sup>5</sup>: Բաղաձայնների նմանատիպ հերթագայում, որը նա անվանում է ֆունկցիոնալ զուգահեռականություն (функциональный параллелизм), հայտնաբերվում է ինչպես մեկ լեզվաընտանիքում, այնպես էլ տարբեր լեզվաընտանիքների միջև՝ նրանց բառային տվյալները համեմատելիս:

Պետք է ենթադրել, որ նուստրատիկ լեզվաբանության զարգացմանը զուգընթաց՝ օտար լեզվաբանների ուսումնասիրություններում աստիճանաբար ավելի քիչ տեղ կարող է զբաղեցնել հայերենի լեզվական նյութը: Տարիներ շարունակ օտար հնդեվրոպաբանների ուշադրությունից դուրս են մնացել ոչ միայն մեր բարբառներն ու նրանց քերականական իրողությունները, այլև հայերենի այն արմատները, որոնք ստուգաբանված չեն կամ համարվում են փոխառություն, քանի որ ավանդաբար ընդունված է համեմատության նյութ դարձնել հայերենի հաստատապես հնդեվրոպական համարվող արմատները: Մինչդեռ հայերենի ստուգաբանության ամենակնճռոտ հարցերը լուծելու ճանապարհներից մեկը և կարևորագույնը նուստրատիկ լեզվաբանությունն է, քանի որ հնդեվրոպաբանության հնարավորությունները որոշակի առումով արդեն սպառված են թվում: Ուսումնասիրվող նյութի ծավալների մեծացման պայմաններում դժվար է ակնկալել, որ օտար լեզվաբանները կարող են զբաղվել հայերենի լեզվական նյութի համակողմանի քննությամբ՝ միաժամանակ լրացումներ կատարելով ստուգաբանության մեջ և շտկելով թույլ տրված վրիպումները: Ընդամին, մի քանի լեզվաընտանիքների լեզվական նյութի ուսումնասիրությունն ու համադրումը մեկ ուսումնասիրողի կողմից, դրական լինելով հանդերձ, որոշակի վրտանգ է պարունակում, քանի որ լեզվաբանը, նյութին լիարժեք չտիրապետելով, կարող է մակերեսային և սխալ եզրահանգումներ կատարել:

Խոսելով ֆունկցիոնալ զուգահեռականության մասին՝ Ա. Մելնիչուկը հ.-է լեզվաընտանիքին բնորոշ է համարում \*ghabh-/kap-/’ap-(‘ep-) տիպի անցումը: Մա շատ կարևոր դիտարկում է և հնարավորություն է տալիս մեծ թվով զուգաբանություններ հայտնաբերելու թե՛ հնդեվրոպական լեզվաընտանիքի ներսում և թե՛ նրա սահմաններից դուրս: Մի շարք լեզուների բառային նյութի վերլուծության հիման վրա մենք փորձել ենք ցույց տալ, որ հետնալեզվային պայթյալանները քմայնանալով և շրթնայնանալով վերածվում են քմային և շրթնային ձայնորդների, այսինքն՝ «մաշվում են»<sup>6</sup>: Դա կարող է կատարվել և՛ բառասկզբում, և՛ բառամիջում ու բառավերջում: Օրինակ՝ հին անգլ. *regen* > նոր անգլ. *rain*, հին անգլ. *Bogen* > նոր անգլ. *bow*, հին անգլ. *geard* > նոր անգլ. *yard*: \*Ghabh-/kap-/’ap-(‘ep-) տիպի անցումը ևս ցույց է տալիս, որ բառասկզբում հնչյուն-

<sup>5</sup> Мельничук А. С., *նշվ. աշխ.*, էջ 28-29:

<sup>6</sup> Նիկողոսյան Գ., *Հայերենի և հնդեվրոպական մի շարք լեզուների տիպաբանական համեմատության ուրվագծեր* (Պատմաբանասիրական հանդես, 2008, N 1, էջ 272-273):

ները ժամանակի ընթացքում ընկնում են, և դա օրինաչափ է: Իրոք, մի շարք լեզուների բառային տվյալների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ բառակզրի հետնալեզվային պայթականները «մաշվելով» վերածվում են շփականների, կոկորդայինների կամ բոլորովին անհետանում են, որի հետևանքով «բացվում են» նրանց հաջորդող ձայնավորները: Բազմաթիվ լեզուներում պատմական հնչյունափոխությունը փաստում է  $\chi$  - հ անցում: Օրինակ՝ անգլերեն *half* և գերմաներեն *Halbe* բառերի հնագույն նախաձևն է՝ *halbian*, ճիշտ նույն կերպ՝ անգլերեն *hang*, գերմաներեն՝ *hangen* «կախել» (< *χανζοjan*) և այլն<sup>7</sup>: Հին հունգարերենի  $\chi$ -ն կանոնավոր կերպով նոր հունգարերենում վերածվել է *h*-ի<sup>8</sup>: Ֆիննաուգրական լեզուներում պատմականորեն կատարվել է *k* -  $\chi$  - *h* հնչյունափոխությունը: Ըստ Պ. Հայդուի տվյալների՝ ուրալյան նախալեզվի *k*-ն ֆիննաուգրական որոշ արմատներում մնացել է անփոփոխ, որոշ դեպքերում վերածվել է  $\chi$ ,  $\gamma$ , *w*, *h* հնչյունների, իսկ որոշ դեպքերում լիովին անհետացել ( $\emptyset$ )<sup>9</sup>: Այդ պատճառով հետնալեզվային և կոկորդային հնչյունների հերթագայություն, որքան ուզեք, կարելի է գտնել ժամանակակից ֆիննաուգրական լեզուներում: Օրինակ՝ ֆիններեն *kala*, հունգարերեն *hal*, մարիերեն *kol*, մորդովիներեն (երգյան. և մոկչան.) *kal*, խանտերենի արևելյան և հյուսիսային բարբառներում համապատասխանաբար՝ *kul* և *χul*, մանսիերենում՝ *χul* (հյուս.), *kul* (հրվ.), բոլորը՝ ձուկ նշանակությամբ (հայ. կողա<sup>2</sup> կ): Հունգարերեն *hΦseg* «տապ, շոգ» բառի համարժեքներն են՝ ֆիններեն *kesä*, երգյաներեն *кызэ*, մոկչաներեն *кызэ*, բոլորը՝ «ամառ» նշանակությամբ: Ֆիններեն *hall* «ցրտահարություն», *kylmä* «սառը», էստոներեն *hall* «ցրտահարություն», *külm* «եղյամ», երգյաներեն՝ *кельме* «սառը» բառերի հիմքում ընկած են միևնույն արմատի փոփոխակները: Նույնը կարելի է ասել նաև կոմի և ուդմուրտերեն *кӧн*, հունգարերեն *hany* բառերի մասին, որոնք բոլորն էլ նշանակում են «քանի», ինչպես նաև՝ հունգարերեն *húsz/ huszon-*, կոմի, ուդմուրտ.՝ *кызэ*, մանս. *χyc* «քսան»:

Վերանալով առանձին լեզուներում կատարված հնչյունափոխության մասնավոր դեպքերից՝ հնչյունների անկման ընդհանուր միտումը կարելի է ներկայացնել հնչյունափոխության հետևյալ շղթայով՝  $k(g, k^h) \rightarrow \chi \rightarrow h \rightarrow \emptyset$ , որտեղ  $\chi$ -ն և *h*-ն պայմանականորեն ներկայացնում են կոկորդայինների ողջ «սպեկտրը»: Փորձենք գտնել հայերենի որոշ արմատների զուգաբանությունները հնդեվրոպական

<sup>7</sup> *The Oxford Dictionary of English Etymology, Oxford, 1966.*

<sup>8</sup> **Майтинская К.**, *Венгерский язык, ч. 1, М., 1955, с. 79.*

<sup>9</sup> **Хайду П.**, *Уральские языки и народы, М., 1985, с. 266.*

լեզուներում՝ հաշվի առնելով այսպիսի հնչյունափոխության հնարավորությունը.

խառն - սանս. [karaŋa] «խառնածին», հուն. Κεραυνυμ «խառնում եմ», լիտվ. kratynis «խառնուրդ», դան. kerne, kærne նորվ. kjerne «խնոցի», շվեդ. kärna «հարել (կարագր)», իսլ. hræra «խառնել», հ.անգլ. cyrne, ն.անգլ. churn «խնոցի», իսլ. հեղեփ «ամբողջի կեսը» - անգլ. half. «կես», գերմ. Halbe «կեսը», իտալ/խոզել - իսլ. hás «խոպոտ», նորվ. hes «խզված», նաև կիծ-/կծել - օսերեն xæcyn:xæst պահլ., պարս. xastan «վիրավորել, խայթել», լատիշ. kodit «կծել», kost «կծել, կտրել», ռուս. кычать, նաև հայ. յեսան - օսերեն ysson «հեսան, սրոցաքար», yssyn:yssad «աղալ, սրել», իսլանդ. hvetja[χe:tʰja], hvessa[χes:a] «սրել», դան. hvæsse[vesə] «սրել, կանգ/ խանգար-/ հանգ/ անկ- - իսլ. hanki «խոչընդոտ, արգելք», hanga «կախված լինել», hengja[hɛingja] «կախել», hniga [ɲi:qa] «ընկնել», hnignum «անկում», շվեդ. hänga «կախել», հ.անգլ. hangian, ն. անգլ. hang «կախել», հ.անգլ. cwenken, ն. անգլ. quench «հանգցնել», գերմ. hängen «կախել», օսերեն angur, գերմ. Angel, անգլ. angle, լատին. uncus «կեռիկ», հուն. αγκυρα «խարիսխ», αγκυλη «հանգույց», կապ/ կափ/ խափ- հ. իսլանդ. haptir «ռազմագերի», իսլ. hefta «կապել, ձերբակալել», haft «կապանքներ», դան. hæfte «կալանք», շվեդ. kapa «հափշտակել», նորվեգ. kapsun «սանձ», հ. անգլ. hæft «գերի», գերմ. haften «կցել, ամրացնել», Haft «ձերբակալում», «գրավել, զավթել», լատ. capio, ere «վերցնել, բռնել, գերել», captus «գերի», հ.անգլ. cēpan, ն.անգլ. keep «պահել», հազ - սանս. [kās], հինդի [kʰāsī] «հազ», [kʰāsna] «հազալ», շվեդ. hōsta, նորվ. hōste, գերմ. Husten, անգլ. cough, ռուս. кашель «հազ», լիտվ. koseti «հազալ», հու - գերմ. gießen «թափել, լցնել, ձուլել, ջրել», իսլ. gjosa «ժայթքել, հոսել», նորվ. gaus «հոսք, հոսանք», ose «ճառագայթել», øs «հեղեղ», øse «լցնել», շվեդ. ösa «հեղեղ», սանս. [kāsār] «լիճ, լճակ»:

Նշենք, որ հայերեն իսլանդի բառը գերմանական լեզուների հետ համեմատել է Գ. Ջահուկյանը՝ իսլանդի < \*kheleph - հմմտ. գոթ. halbs, հ.բ.գ. halb «կես»<sup>10</sup>: Նույն կերպ մինչ այդ չստուգաբանված հազ արմատը նա համեմատել է հին հնդկերեն kās-, kāsa - «հազ» արմատի հետ<sup>11</sup>: Այնուամենայնիվ, պատահական չէ, որ վերոբերյալ արմատները հիմնականում ստուգաբանված չեն. հաշվի չի առնվել արմատի «մաշվելու» հանգամանքը, և հետևաբար, միևնույն նախնական արմատից ճյուղավորված տարբերակներն ընկալվել են որպես առանձին արմատներ: Միևնույն պատճառով այլ հնդեվրոպական լեզուներում գտնում ենք անհայտ ծագման բազմաթիվ բառեր: Օրինակ՝

<sup>10</sup> Ջահուկյան Գ. Բ., *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 248:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 249:

անգլերեն churn «խնոցի» բառը, ունենալով զուգաբանություններ գերմանական այլ լեզուներում, համարվում է անհայտ ծագման բառ, որի իմաստը մթագնված է, մինչդեռ հայերենում, հունարենում և սանսկրիտում գտնված համարժեք արմատները հուշում են բառի նախնական իմաստը՝ խառնել: Վաղուց ստուգաբանված որոշ արմատներ թերևս ունեն վերանայման կարիք, քանի որ կոկորդային բաղաձայններով սկսվող բազմաթիվ զուգաբանություններ անտեսվել են նախկինում: Այդ զուգաբանություններն առնվազն ենթադրում են զուգահեռ ձևերի գոյություն (հետնալեզվային, կոկորդային և շրթնային բաղաձայններով սկսվող) վաղնջական ժամանակներից, մինչդեռ ընդունված հնդեվրոպական նախաձևերը շրթնայինով են սկսվում: Օրինակ՝ գոլ/ գաղջ (հնի. wel-) - իսլ. glæða «վառել, շիկացնել», հլյր «տաք», հլյնա «տաքանալ», նորվ. glød «բոց», glo «կրակ», գերմ. glühen, անգլ. glow «վառվել», հեղ - (հնի. pel-) - գերմ. quellen «հոսել», իսլ. hvöfva «հեղեղ», hell «լցնել», elfur «գետ», շվեդ. hålla «լցնել», älv «գետ», նորվ. elva «գետ», hølje «հեղեղ», հ. անգլ. hlynn, linn «ջրվեժ», ռուս. хлынуть «հորդել», սանս. [halā] «ջուր», [kulya] «ջրանցք, առու»\*:

Առանձին քննության նյութ կարող է լինել հայերեն հաս արմատը, որի ստուգաբանությունը պարզ թյուրիմացության հետևանք է: Այս արմատի վերաբերյալ արժեքավոր դիտարկում է կատարել Վ. Համբարձումյանը՝ այն բխեցնելով ոչ թե հ.-ե. \*enek', այլ \*Has ձևից<sup>12</sup>: Որ Վ. Համբարձումյանի տեսակետը ճիշտ է, կարելի է ապացուցել հետևյալ զուգաբանություններով, որոնք մեզ հաջողվել է գտնել՝ հաս - սանս. [aç] «հասնել»<sup>13</sup>, իսլ. kæsa «խմորել», kæsir «մակարդ», ostur «պանիր», ostagerð «պանրագործություն», նորվ. æse «թթվել, ուռչել (խմորը)», ese «խմորվել, բարձրանալ, հասնել», ost «պանիր», oste seg «մակարդվել», շվեդ. ysta sig «մակարդվել (պանիրը)», jäst «թթված, խմորիչ», jäse «խմորվել, բարձրանալ», անգլ. yeast «խմորիչ», լատին. cāseus, ī «պանիր», որից՝ գերմ. Käse, անգլ. cheese, իրանական լեզուներում՝ պարս. xāstan:xēz, օսերեն xizyn:xyzt «բարձրանալ», ængiziz:ængyzt «խմորվել»: Բոլորի նախնական իմաստն է՝ հասնել, բարձրանալ:

Հնդեվրոպական լեզուներում պահպանված այս չափազանց հետաքրքիր օրինակները վկայում են, որ հայերեն հաս արմատը չէր կարող հնդեվրոպական \*-nek կամ \*enek' նախաձևից առաջանալ:

\* Թյուրքմենական խուսափելու համար նշենք, որ տրված չեն գոլ և հեղ արմատների շրթնային հնչյուններով սկսվող զուգաբանությունները, քանի որ դրանք վաղուց հայտնի են:

<sup>12</sup> Համբարձումյան Վ., Հայերեն Աստված բառի ծագումն ու տիպաբանությունը, Ե., 2002, էջ 29:

<sup>13</sup> Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Ե., 1976:

Հետնալեզվայինների անկումն ամբողջությամբ կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝

$$\begin{array}{l} \nearrow \quad k^w > w > \emptyset \\ k(g, k^h) \rightarrow \quad x > h > \emptyset \\ \searrow \quad k^y > y > \emptyset \end{array}$$

Այսպիսով, բառերը գործածվելիս «մաշվում են». այս երևույթը լեզվի պատմական զարգացման կարևորագույն օրինաչափություններից մեկն է: Նրա ճշգրիտ կիրարկումը կարող է ընձեռել լեզվի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին վերականգնման մեծ հնարավորություններ\*:

Վերը նշեցինք, որ Ա. Մելնիչուկը \*ghabh-/kap-/’ap-(’ep-) հնչյունափոխության սխեման, որը մոտավորապես համապատասխանում է  $k(g, k^h) > x > h > \emptyset$  անցումին, կիրառելի է համարել հ.-ե լեզուների համար: Մենք փորձեցինք մեր ուսումնասիրած հնդեվրոպական զուգաբանությունները, որոնք ենթադրում են հնչյունափոխություն նաև քմայնացման և շրթնայնացման ճանապարհով, լրացնել ֆիննաուգրական լեզվաընտանիքի որոշ զուգաբանություններով:

Այսպես, հայերեն հազ արմատի դիմաց ֆիննաուգրական լեզուներում գտնում ենք՝ կոմի кызӧм, ուղմուրտ. кызон, էրզյան., մոկչան. коз «հազ», կոմի кызыны, ուղմուրտ. кызыны, էրզյան. մոկչան. козомс, էստոն. köhima «հազալ»:

Հայերեն հոս արմատն ունի հետևյալ զուգահեռները՝ ֆիններեն juosta «վազել, հոսել», kastella «թրջել, ջրել, ռոռզել», kusi «մեզ», էստոն. kosk «ջրվեժ», kusi «մեզ», հունգար. eső «անձրև», özön «հոսք», կոմի киськавны «լցնել, ջրել», кисьсыны «լցվել, թափվել», ուղմուրտ. киськыны «լցվել, թափվել», киськаны «լցնել, ջրել», кызь «մեզ»: Այսօրինակ զուգահեռները հուշում են, որ այստեղ պետք է կցել նաև հայերեն գոգ արմատը, որը նույնպես ստուգաբանված չէ:

Կապ արմատի զուգահեռներն են՝ ֆիններեն kiepata«բռնել», kupo «կապ, խուրձ», karalo «բարուր», ուղմուրտ. кабыны «բռնել, որսալ» ,էրզյաներեն каподемс «բռնել, ճանկել», մոկչաներեն капа «ղեզ», մարիերեն капка «դարպաս»:

Անչափ հետաքրքրական են հայերենի կանգ-/հանգ-/անկ- ծագումնաբանական փնջի զուգահեռները ֆիննաուգրական լեզուներում՝ ֆիններեն kangistua նշանակում է «սառչել, փայտանալ,

կար-

\* Հնչյունների մաշվելը-ընկնելը գերակա միտում է լեզվի պատմական զարգացման մեջ, որը, սակայն, չի բացառում հնչյունների հավելումը: Որոշ դեպքերում կոկորդայինը կարող է կրկին վերածվել շփականի, օրինակ՝ իսլանդերեն hvass [χas:] «տուր», hvel [χε:l] «անիվ», hvor [χo:r] «որ» և այլն:

ծրանալ», kangastaa «հայտնվել, գծագրվել»: Այս արմատից են ֆիններեն kangas «կտավ», ինչպես նաև kanki (սեռ.հ. kangen) «ձող, ճիպոտ», hankala «դժվար», hankaloittaa «դժվարացնել», որը համարժեք է հայերեն խանգարել բառին: Էստոներենում գտնում ենք՝ kangestuma «թմրել», kang «չորսու, ձուլակտոր», խանտերենում՝ jaŋk, jänk «մեխ»: Ֆիննաուգրական լեզուներում ևս մի շարք զուգահեռներ կան առանց բառասկզբի պայթականի՝ ֆիններեն onki (սեռ.հ. ongen) «կարթ», էստոն. hanguma «սառչել», hing «հանգույց», մարիերեն йонлаш «ուշաթափվել» (=հանգչել), ангалташ «հենվել» (=անկանել), äнгыр «կարթ»:

Այլ օրինակներ՝ հայերեն կայծ/կեզ/գօս/ազազ/աճին- հ.-ե. լեզուներ՝ իսլանդ. geisli «ճառագայթ», geisla «ճառագայթել», aska «մոխիր», դան. gisten «չորացած», aske «մոխիր», անգլ. ashes «մոխիր, աճյուն», օսերեն xūs, xysk՝ «չոր», սանս. [āsa] «մոխիր, աճյուն», պարսկ. xušk, պահլավ. hušk, քրդերեն hōšk «չոր»: Ֆիննաուգրական լեզուներում գտնում ենք՝ հունգար. aszalni «չորացնել», hőség «շոգ, տապ», ֆիններեն kesä «ամառ», կոմի кодзув «աւտղ», кодзлавны «շողալ», косьмыны «չորանալ», коса «ցամաք», ուղմուրտ. кизили «աւտղ, կայծ», кос «չոր», кцс «երաշտ», кезет «տենդ, մալարիա», երզյաներեն коське «չոր», кизэ «ամառ», մոկչաներեն киза «ամառ», մարիերեն кече «արև»:

Հայերեն կոտոր/կտոր/հաս/էտ/խայթ/կիծ/խած/կէս/ած-ելի փնջի դիմաց կան ֆիննաուգրական մի շարք բառեր՝ ֆիններեն kaataa «սպանել», katkaista «ջարդել, պատռել», jäte «կտոր, հատված», keskus «կենտրոն», kesken «մեջտեղում, միջև», հունգար. kes «դանակ», köze «միջև», կոմի кодъыны «փորել», кодзны «ամորձատել», кесьмыны «տաշել», костö «միջև», кос «գոտկատեղ, գոտի», ուղմուրտ. кесэг «պատառ», кесьмыны, кесяны «պատռել», кус «մեջք, գոտկատեղ»:

Կարծում ենք, ավելորդ չէ ներկայացնել հայերեն հաս արմատի ֆիննաուգրական լեզուներում գտնված զուգաբանությունները՝ կոմի. кисьмыны, ուղմուրտ. кисьманы «հասունանալ», ինչպես նաև շատ հետաքրքիր իմաստային տարբերակներով՝ ֆինն., էստոն. osa «մաս, բաժին, բախտ, ճակատագիր», ֆինն. osuus «մաս, բաժին», osuma «շահ, հասույթ», osittaa «բաժանել, կիսել»:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ֆիննաուգրական այն արմատները, որոնք առնչվում են հայերենի չստուգաբանված բառային շերտին: Դրանցից են խոյգ, խօս, հիւս, հոս, կալ, կապ, կաս, կեզ, կէս, կոտոր, կրակ, կանգ և այլն: Ուշագրավ է այն հանգամանքը, որ այդ զուգաբանություններից շատերը խիստ նման են հայերենի ար-

մատներին՝ ի տարբերություն հնդեվրոպական բազմաթիվ արմատների, որոնք հնչյունական առումով երբեմն էապես տարբերվում են հայերեն համարժեքից: Հետևաբար, չի կարելի ուշադրություն չդարձնել նաև ստուգաբանված այն արմատներին, որոնց համարժեքները կան ֆիննաուգրական լեզուներում: Այդ արմատների թիվը բավական մեծ է: Փորձենք վերլուծել դրանցից երկուսը՝ հայերեն հարց և հոգի:

Ինչպես գիտենք, հ հնչյունով սկսվող հայերեն բազմաթիվ բառերի հ.-ե. նախաձևերը ըստ ավանդական ստուգաբանության սկսվում են շրթնային բաղաձայնով: Դրանցից են՝ հեղ- հետ- հեւ, հոգ, հոլ «մերկ», հող, նաև հարց, հոգի: Սակայն ծագումնաբանական փնջերի գաղափարն արդեն իսկ հակասում է այս մոտեցմանը, քանի որ հայերեն հ-ի դիմաց այլ լեզուներում կարելի է գտնել հետնալեզվային պայթականներ, շփականներ, նաև ֆ բաղաձայն: Բացի այդ, գոյություն ունեն վերոբերյալ արմատների շրթնային բաղաձայններով (պայթական կամ շփական) սկսվող տարբերակներ նաև հայերենում՝ հեղ-/ողող-, հետ-/ոտ-, հոլ/ոլոր, հոգի/ոգի, հարց/փորձ: Ինչո՞ւ անպատճառ ենթադրել, թե նախապես արմատը շրթնային բաղաձայնով է սկսվել, եթե կան նաև հակառակն ապացուցող փաստեր<sup>14</sup>: Առաջին հայացքից թվում է, թե հայերեն հարց (հնի. քրկ'-) և հոգի (հնի. pouio-) բառերը պետք է կապել շրթնային բաղաձայններով սկսվող հնդեվրոպական արմատների հետ, քանի որ դրանք իմաստային առումով համընկնում են հայերենի արմատներին: Սակայն շրթնային բաղաձայնով են սկսվում նաև հայերեն փորձ և ոգի բառերը: Հաշվի առնելով բաղաձայնների հերթագայության փաստն ըստ արտասանության տեղի (ֆունկցիոնալ զուգահեռականություն)՝ պետք է ընդունել, որ այն զուգաբանությունները, որոնք վերագրվում են հարց և հոգի բառերին, իրականում վերաբերում են ոգի և փորձ արմատներին:

Ֆիննաուգրական լեզուներում կան բազմաթիվ արմատներ, որոնք սկսվում են հետնալեզվային և կոկորդային հնչյուններով, երբեմն՝  $\emptyset$  բաղաձայնով (հմտ. հայերեն այց)՝ ֆինն. kerjätä «ողորմություն խնդրել», հունգար. kérti, kérétni «խնդրել», kérés «հարց», kérés «խնդրանք», keresni «փնտրել, հարցնել, խնդրել», կոմի корсьны «փնտրել», коравны «հարսնախոսել», корны «կանչել», ուրմուրտ. курыны «խնդրել», кураны «հարսնախոսել», էրզյաներեն кортамс, մոկշաներեն корхтамс «խոսել, ասել»: Հնդեվրոպական լեզուներում հայերեն հարց արմատի համարժեքը պետք է համարել լատիներեն quaero, ere, որ նշանակում է «փնտրել,

<sup>14</sup> Նիկողոսյան Գ., նշվ. աշխ.: Հետնալեզվայինից շրթնայինի (k/g > v/f) անցման օրինակներ են նաև ռուսերեն koro, chero, անգլերեն enough [ɪnʌf], cough [kɔʃ], laugh [lɑ:f] բառերի ժամանակակից արտասանությունը:

պահանջել, հարցաքննել», inquiero, ere «փնտրել», օտերեն körün: kurd «խնդրել», ինչպես նաև սանս. [arth] «պահանջել, խնդրել», [arthana] «խնդրանք», [arthin] «հայցվոր, հարսնախոս»: Լատիներեն արմատի մի այլ տարբերակը՝ quaeso, ere «փնտրել, խնդրել» (որից էլ՝ inquisitio «հետաքննություն», inquisitor «հետախույզ, հետաքննիչ») կապում ենք հայերենի հայց և խոյզ արմատներին: Ֆիննաուգրական լեզուներում գտնված զուգահեռները հուշում են, որ այստեղ պետք է ավելացնել նաև հայերեն խօս- և ասարմատները. ֆիններեն kysellä «հարցնել», անկաս. kysyä «հարց», käskeä «հրամայել», käski «հրաման», haeskella «փնտրել», kosia «հարսնախոսել», haastaa «կանչել, կոչել», էստոն. küsima «հարցնել», käskima «հրամայել», käsk «հրաման, պատվիրան», otsima «փնտրել», kosima «հարսնախոսել», կոմի юасьны «հարցնել, խնդրել», ուղմուրտ. косыны «խնդրել, պահանջել», մարիերեն йодаш/ядаш «հարցնել, խնդրել», кячаш «պահանջել, խնդրել», էրզյաներեն кизефтемс «հարցնել», азомс «խոստանալ», խանտերեն kăsta «փնտրել», jastəta «ասել», jäsəŋ «ասք»:

Հայերեն հոգի արմատի զուգահեռներն են՝ ֆիններեն henki «կյանք, հոգի, ոգի, շունչ, օդ», henkilö «անձ», huoku «շնչառություն», joukkio «ամբոխ», էստոներեն hing «հոգի, ոգի», hingama «շրնչել», jöuk «ամբոխ», մարիերեն պվչ «մարդ», йӱӱг «հոգի, սիրտ»: Այս օրինակները ցույց են տալիս, որ հայերեն կեանք և հոգի միևնույն արմատի ձևափոխություններն են, իսկ տարբեր լեզուներում հայտնված արմատային փոփոխակների k/g-ն՝ այլևս չգիտակցվող հոգնակերտ մասնիկ: Ֆիններեն väki «ժողովուրդ, մարդիկ», vägi «բանակ, ուժ, զորություն» ոգի արմատի հնչյունական համարժեքներն են: Հոգի (նաև հոգ, հոգս) արմատին հնդեվրոպական լեզուներում հավանաբար համապատասխանում են՝ իսլանդերեն hugur, hugir «միտք, հոգի, ոգի», huga «հոգ տանել», hugsa «մտածել, մտադրվել», hugsi «մտախոհ, ցրված», դանիերեն hygge «հոգ տանել», անգլ. hag «հնցծ. կանացի չար ոգի», գերմ. Hauch «շունչ», hauchen «շնչել», Hege «խնամք»:

Ոգի արմատի դիմաց, հավանաբար, կարելի է դնել իսլանդերեն voga «համարձակվել», veigur «ուժ», բնաս. veig «ոգելից խմիչք, զինի», ռուսերեն от-вара բառերը:

Քննության առնելով մի շարք ֆիննաուգրական լեզուների՝ ֆիններենի, էստոներենի, հունգարերենի, կոմի լեզվի, ուղմուրտերենի, մարիերենի, մորդվիներենի (էրզյաներեն և մոկշաներեն) բառային նյութը՝ գտանք հայերեն բառերին հնչյունական և իմաստային առումով նման բազմաթիվ բառեր: Դրանց պատկառելի թիվը խոսում

է այն մասին, որ նմանությունները պատահական չեն<sup>15</sup>: Հայերեն արմատների ֆիննաուգրական համարժեքները հնարավորություն են տալիս ոչ միայն ստուգաբանելու հայերենի չստուգաբանված և կասկածելի ծագման բառերի մի մասը, այլև ճշգրտումներ կատարել որոշ արմատների ստուգաբանության մեջ: Որոշ դեպքերում ֆիննաուգրական բառը հուշում է հայերեն բառի նախնական իմաստը, որը հայերենում այլևս մթագնած է պարզական արմատի վաղուց անգործածական լինելու պատճառով: Օրինակ՝ կոմի լեզվում միննույն кер արմատից են кер «գերան», керавны «հատել, կտրել», керасьны «հատվել, կտրվել», кера «ուրագ» (ուղմուրտ. кор «գերան», кораны հատել, կտրել», ֆինն. hirs/ uetn. h. hirren): Հետևաբար, հայերեն գերան բառի գեր- արմատի նախնական նշանակությունն է՝ «հատել, կտրել», իսկ գերան նշանակում է «ծառի հատած մասը» (հմմտ. հայ. կտրոն): Գեր- արմատի փոփոխակներն են հայերենում հար-, քեր-, ինչպես նաև կուրտ-, հերձ-, քերթ-, քերծ-:

Որոշ զուգաբանություններ այնքան լայն իմաստային դաշտ են ընդգրկում, որ թույլ են տալիս պատկերացում կազմելու հայերեն արմատի փոփոխակների գրեթե ողջ սպեկտրի մասին, որը կազմում է ծագումնաբանական մի ամբողջ փունջ: Օրինակ՝ հայց (<հարց) արմատի ֆիննաուգրական զուգաբանությունների իմաստային դաշտն ընդգրկում է հայերենի հարց, հարս, հայց, խոյզ, խօս, աս արմատները:

Մեծ թվով բառարմատների քննությունից պարզվում է, որ միննույն արմատը հնդեվրոպական և ֆիննաուգրական լեզուներում ունի հետնալեզվային, կոկորդային, շրթնային և քմային բաղաձայններով սկսվող տարբերակներ: Օրինակ՝

↗ (j) Ֆինն. joukko, էստոն. juk, ս արիերեն ежг, ѣжг

(k) հայ. կեանք → (h) հայ. հոգի, իս լ. hugur, հ. անզլ. hag, ֆինն. henki, huoku, էստոն. hing

↘ (v) հայ. ոզի, ֆինն. väki, իսլ. voga, veig

Համեմատական լեզվաբանության ներկա փուլում անհրաժեշտություն է առաջացել հայերենը, ինչպես հնդեվրոպական ցանկացած այլ լեզու, համեմատելու մեկ այլ լեզվաընտանիքի լեզուների հետ: Անժխտելի է այն փաստը, որ գոյություն ունի արմատի օրինաչափ տարբերակվածություն՝ ծագումնաբանորեն նույնական փոփոխակների փնջերի ձևով: Այդ փոփոխակների առաջացման ճանապարհներից մեկը բառերի «մաշվելու» հետևանքով տեղի ունեցող հնչյունափոխությունն ու անկումն են: Հայերենի և ֆիննաուգրական լեզուների բառային նյութի համեմատական վերլուծությունը կարող է հնարավորություն տալ բացահայտելու այդ փոփոխակների մի մասը: Հայերենի որոշ արմատներ իրենց փոփոխակներով արտա-

<sup>15</sup> Նիկողոսյան Գ., Հայերենը և ֆիննաուգրական լեզուները (Լեզու և լեզվաբանություն, 2008, N 2):

հայտում են բառի պատմական զարգացման ժամանակագրական տարբեր փուլերը: Այնուամենայնիվ, փոփոխականների թիվը ծագումնաբանական փնջերում վերջնական չէ:

**НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЭТИМОЛОГИИ АРМЯНСКОГО  
ЯЗЫКА СОГЛАСНО ДАННЫМ НОСТРАТИЧЕСКОГО ЯЗЫКОЗНАНИЯ**

НИКОГОСЯН Г. В.

**Резюме**

На нынешнем этапе сравнительного языкознания возникла необходимость сопоставления армянского языка с языками других семей. Рассмотрение армянских корней в качестве этимологических пучков дает возможность выделить множество этимологических параллелей армянских слов в индоевропейских и финно-угорских языках. Одним из путей возникновения этимологически тождественных вариативных корней является выпадение звуков в силу их износа.